



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


2010 .

ՀԱԿԱՏԻ ԳՐՈՒԱԾՔԸ ՉԻ ԶՆՋՈՒՄԼ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑ

28

Ա. ԹՈՒՄԱՆԵԱՆ.



398(47.925)

10-88

ԹԻՖԼԻՍ

սրան Մ. Դ. Ռոտինսոն:

1888

ԻՐ ԳՈՐՈՎԱԳՈՒԹ

ԼԻԶԱ ՔՐՕՁ

Дозволено цензурою Тифлисъ. 1888 г. 7 І юня.

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Ա. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Типография М. Д. Ротинянца. На Гол. Просп. соб. д. № 4

73464 ամբ.

2002



1209-84



Ա

րևելքում ապրում էր մի
իշխան, որին կոչում էին
Նահանավուր։ Սքանչելի էր
այն աշխարհը, որին տիրում էր Նահանավուր իշ-
խանը։ Չափ ու սահման չկար նորա ծաղկափթիթ
բլուրներով պատած լեռներին, հազար տեսակ պտու-
ղազարդ ծառերով պնդուած անտառներին, բուրա-
ւէտ ծաղիկներով զարդարուած լաշնածաւալ դաշտե-
րին, կարկաչահոս աղբիւրներին, մեծամեծ գետե-
րին, շքեղ փառաւոր քաղաքներին, գիւղերին ու
մարդիկներին։

Պակաս չէր իշխանի գանձարանից ոսկի, արծաթ
և զանազան ակնեղէններ ու գոհարներ։

Իշխանը ապրում էր գեղեցիկ, ոչ շատ մեծ, մի
սքանչելի, ծառաստաններով ու ճոխ բուրաստաննե-
րով պատած քաղաքում։

Նորա պալատը շինած էր իսկական մարմարից,
շրջապատուած լացն ու ընդարձակ, շքեղ այգիներով,
լի հազար տեսակ երգեցիկ թռչուններով, պտղազարդ
ծառերով, անուշահոտ բուրմունքներով լցուած ծա-
ղիկներով, կարկաչահոս աղբիւրներով, խոխոջուն շատ-
րուաններով, մարմարիօճեայ աւազաններով—լի հա-
զար տեսակ անուշահամ ձկներով:

Իշխանը ունէր մի կին չորի անունով:

Իշխանուհի չորին հոչակուած է ամբողջ արե-
ւելքում իւր գեղեցկութեամբ, առաքինութեամբ և
բարեսրտութեամբ:

Նորա ամուսինը, իշխան Նահնավուրը, նմանա-
պէս բարի էր և առաքինի:

Նորանք իրենց հպատակների հետ վարվում
էին ինչպէս հարազատ որդոց հետ:

Օգնում էին թշուառներին և աղքատներին:
Պաշտպանում էին նորանց ամեն տառապանքից. բո-
լոր նորանց հպատակները ապրում էին միշտ ուրախ:



Բ



Նայելով այդ ամենին իշխան Նահնա-
վուրը և իշխանուհի չորին մտատան-
ջութեան մէջ էին, նորանց տանջում էր
մի զաւակի կարօտութիւնը:

Գոհ ու ուրախ կլինէին նորանք եթէ ունե-
նային զոնէ մի աղջիկ, որը կարող էր մխիթարու-
թեան պատճառ լինել այն որդէկարօտ իշխանին և
իշխանուհուն:

Գ



մարային պարզ երեկոններից մէկն էր:
Այրող արեգակը արդէն մարել էր
արեւմտեան հօրիզօնի յետև:

Տխրադէմ լուսինը լողում էր պարզ, կապոյտ
երկնակամարի երեսով և փռել էր ամբողջ օրը տա-

պալուած երկրի երեսին իւր կաթնանման ստուերը:
Բնութիւնը զեռ կենդանութեան մէջ էր: Ամեն մարդ
գտանվում էր ընտանիքի մէջ: Ամեն տեղ պատրաստ-
վում էր երեկոցեան առատ ճաշերոյթ: Ամեն տե-
ղից՝ դաշտերից, արօտատեղերից դէպի տուն էին
քշվում ոչխարների գառների ու այծերի հօտերը
հովիւի քաղցրահնչիւն սրնգի առաջնորդութեամբ:
Ամենքը խնդում էին իրենց գողտրիկ մանուկներով,
որոնք քնքոյշաբար փարում էին հօրանց պարանոց-
ներով:

Տխուր էր միայն իշխանուհի Լուսին, նման էր
նա մռայլապատ ամպերով ծածկուած դալկահար լուս-
նին: Սոխակների, արտուտների անոյշ դալկալիկները,
ծիծեռնակների մեղիղիկները, ծառերի տերեւների
մեղմ սօսափիւնը, անոյշ զովարար զեփիւռները, չէին
զմայլեցնում նորան: Նա յուզված էր, որպէս մի ա-
լեկոծեալ ծով: Նորա գլխի մէջ կատաղած ալիքների
նման մաքառում էին հազար տեսակ մտքեր միմեանց
դէմ և կրծոտում էին նորա քնքոյշ սիրտը:



նչպէս սովորութիւն էր Նահնավուր իշ-
խանին, յաճախակի այցելել իւր հօտին
գիշերով, ճանապարհ գնալ այն ժա-
մանակ, երբ մեռած բնութեան վե-
րայ թագաւորում է միայն արթուն լուսինը,
ինչ ժամանակ, որ մեղմ զեփիւռների վզգոցի
հետ խառնվում է պարզ փտակների կարկաչիւնը, ո-
րոնք հոսում են ծաղկահալս դաշտերի երեսներով,
անտառախիտ ձորերի միջով: Ահա այդ երեկոցեան նա
պատրաստվում էր ճանապարհ գնալ:

Նորա հրամանով ծառաները պատրաստել էին
իշխանական հազուադիւտ երիվարը, զարդարել էին
մարքարտազարդ թամբով, մետաքսեայ սանձով՝
ջուխտ երծաթեայ ասպանտակներով:



Ե

 իշխանուհին սենեակի մէջ ամենաշքեղ զարդարուած թախտի վերայ նստած էր ու աջ թևքը դրել էր մարքարտազարդ բարձին:

Իշխանն էլ նստած նորա կողքին լուռ ծըխում էր:

Անուշահոտ ծուխը մանր օղակների նման բարձրանում էին վերև և տարածվում սենեակի մէջ:

Երկար լուռութեանը վերջ տալով, բարձրացաւ իշխանը տեղից ասելով. դէ՛հ, հիմա ժամանակ է ճանապարհ գնալու:

Սրտի խորքերից կայծերի նման մի խոր ա՛խ, դուրս ցայտելով բարձրացաւ իշխանուհին տեղից, կանգնեց ամուսնու առաջ և կրկին հառաչելով հարցրեց նորանից. սիրելի Նահապուր, դու շո՞ւտ կը վերադառնաս:

Իշխանը հազար տեսակ խրախուսական խօսքերով սիրտ դրեց իշխանուհուն, և մնաս բարեաւ ասելով ու նորա այտերին մի զոյգ ջերմ համբոյրներ տալով մեկնեցաւ:

Իշխանուհին հետևեց նորան և արտասուլթոր աչքերով ու հեկեկալի ձայնով բարի ճանապարհ մաղթեց ամուսնուն:

Իշխանը քաջապէս հեծաւ իւր ձին, առաւ ոսկեկոթ մորակը, մորակեց իւր սևաթոյր նժոյզին և մի ակնթարթում դուրս թռաւ: Աղախիններից մէկը առաւ ջրով լի երծաթէ ամանը և սկսեց իշխանի հետևելից սրսկել մինչև բազի դուռը:



Զ

ատաղած, ալեկոծեալ ծովի նման, իշխանուհին սրտի խորքերից անվերջ ակեր դուրս թռցնելով, աչքերից հեղեղի նման յորդառատ արտասուք թափելով, երկար ժամանակ կանգնած տեղից, զնաց նստեց իւր առաջուայ նստած թախտի վերայ և սկսեց մաքառել հազար տեսակ սրտամաշուկ մտքերի դէմ:

Ե

Սենեակի մէջ տիրած էր խորին լուռութիւն,
Երկար մտածմունքից սթափուելով, բարձրացաւ իշխանուհին տեղից և կանչեց աղախնուն:
Ներս եկաւ մի բարձրահասակ զեղադէմ օրիորդ

և խոնարհութեամբ կանգնեց մի քանի քայլ հեռու:

Մարալ, խօսեց իշխանուհին, առ այգու բանալին, դուռը բաց և տար այնտեղ նշենու տակ փոխի գորգերը, առ տար և այս բարձր, տաքացրու կաթ, յետոյ փութացիր տիկին Ոսկէհատին այտեղ հրաւիրելու:

Մարալից յետոյ բարձրացաւ տեղից և սկսեց շքեղաշուք զահլիճի միջով անց ու դարձ անել, մեղմ ու բարակ ձայնով երգելով:

Գնաց սիրելիս թողեց ինձ մենակ,
Թացոտ աչքերով նստած սենեակում,
Որպէս բնքուշիկ աննման սոխակ,
Ուշքը մոլորուած, փակուած վանդակում:

Այրվում է անհուր սիրտս չարաչար,
Մաշվում է կեանքս դառն մտքերով,
Ախ հանգստութիւն, չունեմ և դադար,
Ծածկուած է սիրտս անբոյժ վէրքերով:

Հանգաւ արևը իմ ուրախութեան,
Լուսինս պայծառ ամպի տակ մարեց,
Պայծառ ու փայլուն ժամեր խնդութեան,
Տխուր և խաւար օրերի փոխուեց:

Տիրում է զարուն և խինդ բնութեան,
Անցնում է տխուր, ցրտաշունչ ձմեռ,
Վայելում մարդիկ օրեր բերկրութեան,
Միայն ես դժբաղտ եղել կիսամեռ:

Օրեր երջանիկ իմ լացի փոխուած,
Ժամեր ոսկէփայլ էլ չեն ինձ համար,
Ամեն օր դառը մտքով զբաղուած
Զտալով մի ժամ սրտիս քիչ դադար:

Նստած ամեն օր արցունք թափելով,
Աչերս յառաց միշտ ճանապարհին
Գիշեր և ցերեկ անքուն անդադար,
Նստած կրսպասեմ սիրելուս զայլին:

Ը



արալը փութով առաւ բանալին, բացեց այգու դուռը, տարաւ այնտեղ մախմուրեայ գորգերը ու փռեց ծաղկախառն խոտերի վերայ: Տարաւ այնտեղ սերախառն կաթով լի երծաթէ ամանը: Գորգերի վերայով դրեց ոսկէթելով և մարգարիտներով զարդարուած բարձեր:

Այս ամենը արագութեամբ բարեկարգելէն յետոյ, վազեց Ոսկէհատ տիկնոջ հրաւիրելու: Գնում էր նա ճանապարհին ցած ձայնով երգելով, միևնոյն ժամանակ մտածելով իւր իշխանի տան ծառայող երիտասարդ Միքէլին արժանանալու մասին:

Միքէլը և Մարալը Շահնավուր իշխանի տան ամենահաւատարիմ և ամենասիրելի ծառաներն էին: Նրանք երկուսը միմեանց վերայ սիրահարուած էին և այդ սէրը ուխտել էին սրբութեամբ պահել:

Խառնաշփոթ մտքերով զբաղուած, մոմուշով Մարալը հասաւ տիկին Ոսկէհատի տանը և սկսեց զուան մուրճը ծեծել: Այդ միջոցին տիկին Ոսկէհատը ամբողջ օրուայ ջերմութիւնից նեղացած, անց ու դարձ էր անում գոցնգոցն ներկուած շքեղ պատըշգամբի վերայ և կազաութովում էր մաքուր զովարար օղի մէջ:

Մարալը ներս ընդունվեցաւ և տիկնոջ հրամանով բարձրացաւ վերև:

Ի՞նչ կայ, Մարալ, հարցրեց տիկինը ժպտալով: Իշխանուհին խնդրեց ձեզ շնորհ բերել իւր մօտ: Ի՞նչու, Մարալ, ի՞նչ կայ, հիմա մութը կտօնի, երեւի մի բան կայ, ասաց տիկինը վրդովուած ձայնով:

Հանգիստ եղէք տիկին, ոչինչ չկայ, իշխանը զբ-

նաց այցելելու իւր հօտին, իշխանուհին իւր մենակութեան պատճառով կուզէ ձեզ հետ մի քիչ ժամանակ անցկացնել:

Լա՛ւ, ուրեմն սպասիր, մէկ տեղ գնանք:

Տիկինը փութով ներս մտաւ սենեակը, զարդարուեց շքեղ հագուստներով, պճնուեց ոսկով արծաթով, զուրս եկաւ հրամայեց աղախիններին ու ծառաներին, որ լաւ հսկեն տանը: Դէ՛ գնանք, Մարալ:



Թ

Թափուելով մտածմունքից Մարալը, հենց որ տեսաւ մօտեցել են իշխանի ապարանքին, իսկոյն առաջ ընթացաւ հաղորդելու իշխանուհուն տիկնոջ գալը: Ներս մտաւ տիկինը և սենեակի զուան հանդիպեց իշխանուհի Հուրիին:

Ո՛հ սիրելիս, ասաց իշխանուհին ջերմ գրկելով նորեկ ընկերուհուն. ի՞նչպէս ես, հոգեակ, հարցրեց նորանից:

Շատ լաւ, միայն կըցանկայի իմանալ քո առողջութիւնը պատասխանեց տիկինը:

Է՛, է՛ է՛, սիրելի Ոսկէհատ, չգիտես, որ միայն տխրութիւնն է իմ ճակատին գրուած:

Է՛հ, բաւական է քեզ, սիրելի Հուրի, միթէ այսպիսի փառքերի տէրը կիմանայ տխրութեան նշանակութիւնը:

Է՛հ ինչ եմ անում այսպիսի փառքերը, այսքան ոսկիքն ու գոհարները, երբ զուրկ եմ ուրախութեան պտուղից, ասաց, խոր հառաչելով իշխանուհի Հիւրին:

Սիրելի Հուրի ես լաւ գիտեմ քո տխրութեան քո ցաւի ու դարդի պատճառը, բայց զարմանում եմ, որ դու այդ աստիճանին յուսահատվող ես: Զէ, իմ սիրելի, պէտք է ամեն ժամանակ երկարամիտ լինել, ամեն ժամանակ պէտք է յոյս ունենալ, տխրութիւնը պէտք է քեզանից հեռու և հեռու պահել, ուրախութեան թագաւորութիւնը պէտք է քո մէջ անվերջ տիրէ: Դու ևս զուցէ շատ օրինակներ լինես տեսած. այնպիսի օրինակներ, որ շատ մարդիկ իրենց ծերութեան ժամանակն են միայն ունենում որդի, իսկ դուք զեռ երիտասարդ էք, զուցէ մէկի փոխարէն, մի քանիսը պէտք է ունենաք, մարդու ճակատին ինչպէս գրուած է, այնպէս էլ պէտք է կատարուի:

Այսպէս հազար տեսակ խօսքերով տիկինը սիրտ

էր դնում իշխանուհուն և յոյս էր տալիս, որ անշուշտ նոքա ևս անդաւակ չեն մնալ:

Դու ասե՞լ ես ծառաներին տունը պահպանեն, որ դու այս գիշեր ինձ մօտ պէտք է մնաս, հարցրեց իշխանուհին տիկնոջը:

Այո՛, ասել եմ սիրելի Հուրի, այս գիշեր կըմնամ քեզ մօտ:

Դեանք այգին, այնտեղ քիչ կաղդուրուինք զովարար օղի մէջ և վայելենք սուրճ:



Ժ

շխանուհին և նորա ընկերը դանդաղ քայլերով և խառն խօսակցութիւններով գիմեցին այգին: Մտան և նստեցին իրենց համար պատրաստած բարձերի վերայ, վերջ չը տալով ժպտախառն խօսակցութիւններին:

Մի առ րոպէ տիրեց նորանց մէջ սրբազան լռութիւն:

Մի բաժաի կաթնախառն սուրճ վայելելով, սրբապետ մի խոր ա՛խ դուրս թռցնելով, իշխանուհին թեքը դնելով բարձի վերայ սկսեց երգել.

Տրտում տխուր սենեակում
Մտքի լծի տակ ընկած,
Տոչորվում եմ չարաչար,
Որպէս թշուառ բանդարկուած:

Սիրտս պատուած վէրքերով
Վարանում եմ անդադար,
Վարանում եմ չեմ կարում,
Բիւր վէրքերիս գտնել ճար:

Սոխակների դալալիկը
Բնաւ չեն զմայլում,
Եւ ոսկէզօծ պալատներ,
Յաւերս չեն փարատում:

Արեգակի վառ լոյսը,
Խնձի համար է խաւար,
Կապոյտ երկնի աստղերը
Ո՛հ, դարձել են ողջ մոլար:

Դժբաղդութիւնը միայն,
Այս ճակատիս իմ գրուեց,
Ուրախութեան պտուղից,
Ճակատադիրն ինձ զրկեց:

Ինձ մնում է լոկ մտնել
Սև գերեզման յաւիտեան,
Որ կարենամ ազատուիլ
Այս ցաւերից անդարման:

Երգը վերջացնելուն պէս նորա աչքերից թափուեցին զոհարի նման արտասուեաց մի քանի դառն կաթիլներ:

Այս Հուրի, բաւական է քեզ սիրելիս, բաւական է, իմ սիրտս էլ բաւականին նեղացրիր, ասաց աիկին Ոսկէհատը սրբելով իւր թաց աչքերը:

Կրկին տիրեց խորին լռութիւն:

Երկու սիրելիները, իշխանուհին և տիկինը խորին մտածմունքների մէջ ընկղմուեցան:

Սիրելի Հուրի, թող քեզ պատմեմ Պճնազ թագաւորի և Ալագեօզ թագուհու պատմութիւնը, խօսեց վերջապէս տիկինը, չըթողնելով իշխանուհուն հազար տեսակ մտքերի դէմ մաքառել:

Ա՛խ, Ոսկէհատ այդ պատմութիւնը ես մանկութիւնից լսել էի մօրիցս, բայց լաւ չեմ յիշում, դու որտեղից գիտես, ասաց խոր հառաչելով իշխանուհին, սթափուելով մտածմունքից:

Այս պատմութիւնը նմանապէս իմ մայրս է ինձ պատմել և ես այժմ շատ լաւ յիշում եմ:

Դէ՛հ, պատմիր:

Դէ՛հ լսիր:


ԺԱ

Մեզանից շատ հեռու սարերի ծովերի յետեւ, սորանից մի քանի դար առաջ, մի փոքրիկ գիւղում ապրում էր մի շատ աղքատ մարդ Ոսկերչ անունով: Աղքատ Ոսկերչի կինը մեռնում է և թողնում է երեք մատաղահաս օրիորդ որոնցից կրտսերի անունն էր Ալագեօզ:

Գնում էր ամենայն օր Ոսկերչը հարուստներից ողորմութիւն էր խնդրում, հաց էր հաւաքում, գրնում էր անտառը փայտ բերում, բայց դարձեալ չէր կարողանում կառավարել իր որդիանց:

Նորա երկու մեծ աղջիկները չափազանց տգեղ էին և բնութեամբ չար, իսկ Ալագեօզը անհատ էր այն երկրի մէջ, հրաշալի էր նա իր սեւ, վառվռուն, հրապուրիչ աչքերով և լրացած լուսնի նման փայլուն պատկերով, ամեն մի էակ նորան տեսնելիս երկար ժամանակ աչք թողնել չէր կամենում: Հեզ էր նա բնութեամբ, խոնարհ էր, հնազանդ ամենքին, մեծին թէ փոքրին, ծերին թէ երիտասարդին և չափազանց գործունեաց: Նորա մեծ քոյրերը ամեն

թշուառութիւն զանցառութեան տուած, անգործ պարապ պտտում էին դաշտերը, շրջում էին անտառների մէջ, որոնում էին վայրենի պտուղներ և այսպէս հրաշալի բնութեան վայրենի զուարճութիւնները վայելելուց յետոյ կէսօրին վերադառնում էին տուն ու հօրից ստիպմամբ հաց պահանջում: Իսկ Ալագեօզը հաւաքեց իր վերայ տան ամեն հոգսերը, աչքի առաջ ունենալով իրենց թշուառութիւնը ու պակասութիւնները: Իր հեզ բնութեամբ ամենքի աչքի սիրելի դառնալուց յետոյ, ամեն ջանքով կատարում էր հարուստ հարեանների գործերը, շորեր էր կարում, գուլբայ էր գործում ու իր բոլոր աշխատանքի վարձը ստանում էր հաց, իւղ, պանիր և ուրիշ կենսական պիտոյքներ առնում և պահում հօրը ու չար քոյրերին, իսկ ինքը բաւականանում էր մի կտոր չոր հացով ու պանրով:





ԺԲ

իրում է ձմեռը, տիրում է
ցուրտ սառնամանիքները, դիզ-
վում է զուտակներով ձիւնը,
բարձրանում է կատաղած բոքն
ու բորանը և ամեն կողմով ար-
գելում է մարդկանց դուրս գը-
նալ:

Հարուստը պատրաստած իր
ձմեռուայ պաշարը, պատասպա-
րուած տաք սենեակի մէջ, իր
ընտանիքով բոլորած տաք կը-
րակի շուրջը զբաղուած է իր
գողտրիկ սաների հետ հազար

տեսակ զուարճութիւններով:

Իսկ աղքատը՝ անտուն, անտէր, խեղճ աղ-
քատն ամբողջ ձմեռն անց է կացնում դժոխային

կեանք: Քնում է նա համարեա բաց երկնքի տակ, խոնաւ
հողի վերայ, ամբողջ օրերով քաղցած է մնում և ա-
հա դորա պատճառով շատերը զոհ են դառնում
ցուրտ սառնամանիքներին և մնում են անշնչացած
սառը հողի վերայ:

Բայց այսպիսի դժբաղդութեան, այսպիսի
տանջանքների մէջ, առաքինի որդին է միայն, որ
կարողանում է մսիթար լինել իր խեղճ ծնող-
ներին. գործունեաց որդին որ հօր վերքերով պա-
տուած սրտին դարման է որոնում իր ջանքերով,
հեզ և խոնարհ որդին է, որ հօր տապալուած սըր-
տին զովութիւն է փչում իր քաղցր խրախուսիչ
խօսքերով, իր անխոնջ անվաստակ աշխատանքով:

ԺԳ



ի օր Ալազեօզի գլխի մէջ ծագեց մի
ուրիշ միտք և նա սկսեց իր հա-
րեւաններից իր աշխատանքի փոխարէն ժողովել ցորեն:

Հարեւանները, որոնք որդու պէս սիրում էին
նորան, ամեն մի խնդիրքն անկատար չէին թող-
նում և միշտ նպաստում էին նորան:

Այսպէս Ալազեօզի նոր գործն օրստօրէ աճող էր

անցնում, հարեանները տալիս էին նորան առատորէն, որքան որ նա ուզում էր:

Ամբողջ ձմեռը Ալագեօզը հորից և քոյրերից ծածուկ ցորեն ժողովելով մինչև դարնան սկիզբը մի մեծ ջուլակ լքցնում է ընտիր ցորենով:



ԺԴ

արունը տիրեց: Ձիւները հալուեցան: Պատանապատ աշխարհը կրկին շունչ առաւ, ձիւնապատ դաշտերը զարդարուեցին թաւշեայ խոտով, կապտագոյն բուրալից մանուշակն աւետեց թառամած ծառերին դարնան գալը, ծառերն էլ սկսեցին զարդարուիլ սպիտակագոյն բուրալից ծաղիկներով:

Աւետաբեր ծիծեռնակները, նուագաձայն սոխակները, քաղրահնչիւն արտուտները սկսեցին դըրդեցնել լեռներու անտառները իրենց անոյշ դալալալիկներով: Բայց թշուառ աղքատը, նա թէև ուրախանում է որ ազատվում է ձմեռուայ խստութիւններից բայց և դարունն էլ նորան այնքան չէ մըխիթարում, որովհետև նա խնդալու սիրտ չունի,

նա դարնան հրաշքները վայելելու կարողութիւն չունի և այսպէս դարձեալ նա տոչորվում է աղքատութեան լճի տակ:

Ալագեօզի քոյրերը սկսեցին շարունակել իրենց զուարճութիւնները ծաղկափթիթ դաշտերում:

ԺԵ

Մի օր Ոսկերչը մոլորուած մենակ նստած էր տանը: Վիզը թեքած ուսի վերայ, աչքերը գցած գետնին, ձեռները կուրծքին խաչաց և դառն մտքերի ովկիանոսի մէջ, երբեմն վիրապատ սրտի խորքերից դառն հառաչանքներ արձակում:

Մտաւ սենեակ Ալագեօզը, տեսաւ հօրն այս դըրութեան մէջ, նորա կարեկցութիւնը շարժուեց և մրայոն աչքերից սկսեցին ցոլանալ դառն արտասուքի մի քանի գոհարանման կաթիլներ: Մօտեցաւ հօրը և մեղմ ձայնով կոչեց. Հայրիկ:

Ոսկերչը աղջկան տեսնելով հառաչեց: Ալագեօզը իմացաւ հօր տխրութեան պատճառը, նա զիտէր որ հայրը կանգնած էր դառն մտքերի տակ, այլ ևս չուզեց խանգարել հօրը, նստեց նորա կողքին ու ըսկըսեց մտածել իրենց ապագայի վերայ:

ԺԶ



իւ ջուր, խօսեց վերջապէս Ոսկերչը:
Ալազետը փութալով բերեց ջուրը,
տուեց հօրը և դարձեալ նստեց նորա հանդէպ:

Հայր, ինչու ես տրտում, յայտնիր սրտիդ խոր-
հուրդը, յայտնիր, զուցէ քո տրտմութեան վերջ տալ
կարողանամ, վերջ տալ կարողանամ և քո դառը
մտքերին, ասաց Ալազետը:

Ախ, իմ սիրելիս, չբզիտես միթէ դու իմ տըխ-
րութեան պատճառը, չբզիտես միթէ դու իմ վշտերս:
Ո՛հ, դու ինձ կրկին մի վրդովեցնել, սիրելի Ալազետ,
ո՞վ կարող է բուժել իմ անթիւ վերքերը, թող
լուեմ, լուեմ սիրելի Ալազետ, ասում էր Ոսկերչը:

Հայր, ասաց Ալազետը, ՚ի հարկէ դու մտա-
ծում ես մեր ապագայի համար, մտածում ես մեր
կեանքի երջանկութեան վերայ և ահա ապագան ա-
պահովացնելու ժամանակն հասել է: Գարուն է. աշ-
ժըմ հարկաւոր է արտ մշակել, ցորեն ցանել ապա
հնձել և ամբողջ տարուայ հացը պատրաստել, որ
սա ամենագլխաւորն է և ապա երկրորդականների
համար հոգալ, այսինքն իւղի, պանրի, հազուստի
և ուրիշ պիտոյքների:

Այո՛, սիրելիդ իմ Ալազետ նախ պէտք է հոգալ.

հոգալը ուշ է և ձեռք բերելու էլ դուռը չըկայ, պա-
տասխանեց Ոսկերչը:

Բաւական չէ, սիրելի Հայր, որ ունենաս վարե-
լու ցորեն, որ ստանալ կարողանաս մեր մի ամբողջ
տարուայ պաշարը, ասաց Ալազետը:

Մի դառն ժպիտ խաղացնելով իւր դակացած
շրթունքների վերայ, ասաց Ոսկերչը, եթէ իմ անը-
ման, ունենայինք վարելու ցորեն էլ ինչի համար
չըհոգայի:

Ժպտաց և Ալազետը ու յայտնեց հօրը իր գաղտ-
նի պահած ցորենի մասին:

Սկզբում Ոսկերչը չըհաւատաց, բայց համո-
զուելով՝ զննեց միւս սենեակի, ասաց և երբ
տեսաւ մի մեծ ջուալ լի ամենալնտիր ցորենով,
ուրախութիւնից մի բառ անգամ չըխօսեց, միայն,
ա՛խ, հոգեակ.... ասելով, ընկաւ օրիորդի պարանո-
ցով և երկար խօսալ չըկարաց:

Որպիսի հրճուանք, որպիսի ուրախ տեսարան:

Վերջապէս ընդհատելով լուռութիւնը, համբու-
րեց Ոսկերչը օրիորդին և աչքերից մի քանի ուրա-
խութեան արտասուքի կաթիլներ վալը գլորելով,
հարցրեց նորանից ցորենի մասին:

Ալազետը բոլորը մանրամասնաբար պատմեց հօրը:

Կրկին համբուրեց Ոսկերչը օրիորդի ճակատից
և տխրամած կնճիռապատ աչտերի վերայ սկսեց փայ-
լել ուրախութեան ճաճանչներ ու վեր բարձրաց-
նելով իր երկու ձեռները գոչեց բարձրաձայն, փառք
Քեզ Աստուած, փառք Քեզ, որ այդքան ձեռնա-
ռատ ես ու բազումողորմ, արդեօք ինչպէս են շատ
տղէտներ յանդգնում Քեզանից դժգոհ լինել:



ԺԷ

Իրելի Հայր, ուրեմն պէտք է մեր
հարեաններից մի գութան խընդ-
րել, ասաց Ալագեօզը:

Այո, ես յուսով իմ, որ ոչ ոք մեզ
չէ խնայիլ, մանաւանդ սիրելի Ալա-
գեօզ, եթէ դու ինքդ խնդրես:

Ես երեկոյեան կրգնամ հարեաններից կրխնդրեմ
և յուսով եմ որ վաղն անշուշտ գութան կունենանք,
իսկ հետեւեալ օրը կ'սկսենք մեր գործը:

Ոսկերչը ստացաւ և գութանը:

Հետեւեալ օրը Ոսկերչը և Ալագեօզը դիմեցին
դաշտը և սկսեցին ուրախ գործել:

Առաւօտեանից սկսած մինչև կէս օր բանելուց
յետոյ, Ալագեօզը դադարեցրեց հօրը և ինքը փութա-
ցաւ տուն ճաշ բերելու: Նորա մեծ քոյրերը դաշ-
տերից վերադառնում են տուն, տեսնում են դու-
տերից վերադառնում են հարեաններից,
ուր փակած, իսկոյն հարցնում են հարեաններից,
երբ իմանում են որ Ալագեօզը և իրենց հայրը դաշ-
տումը գործում են, առանց հետաքրքրութեան ըս-
կաւմ են փութալ դէպի դաշտ:

Ճանապարհին պատահում են Ալագեօզին:

Յիմարներ, ասում են Ալագեօզի քոյրերը, դու-
ուր փակում էք և դուք գնում, չըզիտէք որ մենք
պէտք է դանք:

Գնացէք, սիրելիք հօրս մօտ, ահա ես գնում
եմ ճաշ բերելու, պատասխանեց Ալագեօզը քաղցրու-
թեամբ:

Ալագեօզը տուն գնաց, առաւ հաց և մածուն,
որ ստացել էր հարեաններից իբրև վարձ իր արած
գործերի, յետոյ փակեց դուռն ու գնաց հօրը և քոյ-
րերին մօտ:

Կերան քոյրերը ոչինչ չըհարցնելով, վերկացան
դարձեալ ճանապարհ ընկան դէպի հեռու դաշտերը:

Մնաց Ալագեօզը հօր հետ մի ստուերախիտ
ծառի տակ նստած:

Նա պարկեց և սկսեց մեղմ ձայնով երգել:

Հասաւ զարուն զեղեցիկ,
Ծագեց արեւ սպաղուն
Պատանապատ աշխարհին,
Փռեց շողեր վառվռուն:

Սուր, ձիւնապատ լեռները
Պճնուեցան կանաչով
Եւ մերկացեալ ծառերը
Զարդարուեցան ծաղկունքով:

Դաշտ ու բլուր պճնուեց
Ծաղկախառն խոտերով,
Դղրդում է անտառը
Կարկաչահոս գետերով:

Շուտ զարթնեցան զիւղացիք
Ուրախ դաշտը զիմեցին,
Եւ բքաբեր ցուրտ ձմեռան,
Պաշար շինեւ ջանացին:

Վերջացրեց երգը և քիչ հանգստանալուց յետոյ,
բարձրացաւ տեղից ասելով հօրը. վեր կաց հայրիկ,
գործը շարունակենք:



ԺԸ

յապէս ամեն օր Ալագեօզն իր
հօր հետ առաւօտից մինչև
երեկոյ բաճում էր, երեկոներն էլ
լուսնեփայլ զիշերներով նստում էր և հարեանների
գործն էր կատարում:

Անցան քանի մի ամիսներ: Յորենը բոլորո-
վին հասաւ և ոսկեփայլ հասկերն անոյշ զեփեռ-
ների հետ օրօրվում էին այս ու այն կողմը և բարձ-
րացնում մեղմ սօսափին:

Ոսկերչը և Ալագեօզն առան մի մի մանգաղ ու
սկսեցին ցորենը հնձել, խուրձեր կապել ու փանջակ-
ներով դարսել:



ԺԹ



նչպէս սովորութիւն է, այն երկրի թագաւորը մարդ էր ուղարկում որ ցորենի տասանորդ ստանան թագաւորի համար, այն տարին ել տասանորդ ստնալու գընացել էր թագաւորի որդին, որին կոչում էր Պճնազ:

Ամեն գիւղորայքից շարունակ հաւաքելով տասանորդը հասնում էր մինչև Ոսկերչին, որի մօտ էր և իր աղջիկ Ալագեօզը:

Մօտեցաւ թագաժառանգ Պճնազը և Ոսկերչից պահանջեց իրեն պատկանող տասանորդը:

Մնաց շուարած Ոսկերչը, ոչինչ խօսել չըկարաց, աչքերը գցել էր գետնին և լուռ նայում:

Պճնազի երկրորդ հարցի վերայ մօտեցաւ Ալագեօզն ու ասաց. ամենատղորմած մեծ իշխան, խնայիր մեզ այս մի քանի խուրճերը, որ զուք պէտք է վերցնէք իբրև տասանորդ, մենք հազիւ ձեռք բերինք այս և սա է մեր ամբողջ տարուայ պաշարը:

Պճնազը նայելով նորա մարմարափայլ երեսին, սեւթուր մրայօն աչերին, կամարակալ ունքերին, մեղմ բարակ շրթունքների յետև շարուած մարքարտանման ատամներին, անողջ ձայնին, քաղցր խօսակ-

ցութեանը, մնաց զմայլուած և երկար նայում էր նորա երեսին ու ոչինչ չէր խօսում:

Դա քո հայրն է՞, հարցրեց վերջապէս Ալագեօզից, ցոյց տալով Ոսկերչին:

Այո՛, պատասխանեց նա մեղմ ձայնով:

Ոչինչ չըխօսեց Պճնազը, թողեց Ոսկերչին և անցաւ ու իր թիկնապահների հետ հեռացաւ:

Պճնազի հետ էր և իր հօր ամենասիրելի զօրապետներից մէկը, որը նորա հրամանով պէտք է անբաժան լինի Պճնազից ճանապարհորդութեան ժամանակ և որին կոչում էին Մալբի:



Ի

լագօզին տեսնելուց և նորանից հեռանալուց յետոյ, Պճնազը ընկղմուեց խոր մտքի մէջ, կարծես Ալագեօզի վառվռուն աչերից մի անշէջ կայծ թռաւ և ընկաւ նորա սրտի մէջ, որ սկսեց անդադար տանջել նորան:

Ճանապարհին Պճնազը իր ճանապարհորդականիցների հետ միասին իջաւ մի կարկաչահոտ աղբիւրի մօտ, որ բղխում էր սարի ստորոտից և ոռոգում անտառներն ու ծաղկափթիթ հովիտները:

Գնաց Պճնազը լուացվեցաւ սառը ջրով, ապա նստեց աղբիւրի մօտ ընկած քարի վերայ և ըստեց լողալ հազար տեսակ խառն շփոթ մտքերի ով-կիանոսի մէջ:

Նորա թիկնապահները ճաշի պատրաստութիւն էին տեսնում:

Իսկ Մալբին առանձնանալով իր մտքի հետ, նստել էր Պճնազից հեռու և չէր ուզում մօտենալ նորան ու խանդարել նորա մտքերը:

Եկ այստեղ Մալբի, կանչեց Պճնազը նորան իր մօտ:

Մօտեցաւ Մալբին և լուռ կանգնեց նորա մօտ:

Առ ժամ երկուսի մէջ տիրեց խորին լուռ-թիւն:

Վերջապէս Պճնազը ընդհատելով լուռութիւնը խօսեց:

Սիրելի Մալբի, թող քեզ պատմեմ իմ յանկարծակի տխրութեան պատճառը:

Ամենասիրելի մեծ իշխան խօսեց Մալբին, այդ իսկոյն ես նկատեցի, որ ձեզ մի բան մտածելու

առարկայ դարձաւ, միայն իրաւն տաաց, չըկարողացայ ոչ մի կերպ մի բան եզրակացնել: Պատրատ եմ լըսելու ձեր ամեն մի առաջարկութիւնը և իմ կարողութեանս չափ օգնելու:

Սիրելի Մալբի, այն օրիորդը, որ դու էլ տեսար թէ ինչպիսի քաղցրութեամբ ինչդեց մեզանից չառնել իրենցից տասանորդ, ՚ի հարկէ դու տեսար և կարծեմ լաւ զննեցիր նորա գեղեցկութիւնը, նորա ազնիւ վարմունքը, հեղութիւնը, անոյշ խօսքերը, ահա նա ինձ միանգամից յափշտակեց և ահա այժմ իմ մտածողութեան առարկայ նա է դարձած, ես էլ այսուհետեւ, սիրելի Մալբի, ոչ մի օրիորդի, թագաւորի, մեծ իշխանի վերայ չեմ համաձայնիլ պսակուելու, բացի այդ գիւղացի աղջկանից:


Մալբին քիչ խորատուզվելուց յետոյ ասաց. ամենասիրելի մեծ իշխան, ես իմ կողմանէ խորհուրդ կըտայի, որ այդպէս լինի, այսինքն քո ցանկութեանը համեմատ, որպէս զի դուք կարողանաք երջանկաբար կեանք անցկացնել, միայն թերահաւատ քո հայրը գուցէ այնքան շուտ չըհամաձայնի:

Սիրելի Մալբի, ինձ համար միևնոյն է, թէ չըհամաձայնի ես կըբաժանուիմ հօրիցս, կ'առնեմ

այդ օրիորդին և կը հեռանամ հօրս աշխարհից կանց-
նեմ ուրիշ երկեր, ինչպէս և իցէ միթէ չենք կարե-
նալ մի թեթեւ ապրուստ ճարել, միայն ինչպէս դուք
ասացիք, սիրելի Մալբի, ես կարող եմ երջանիկ լի-
նել այն ժամանակ, երբ որ կըլինիմ իմ սրտիս ցան-
կացածին հետ, նորա հետ ապրելով չեմ զգալ թը-
ռառութիւն, ոչ պակասութիւն, ոչ վիշտ, ոչ չար-
արանք և առանց նորան էլ ինձ չէ սփոփել ոչ
փառաւոր արքունական զահը, ոչ թագը, ոչ ոսկե-
զարդ պալատները և ոչ թագաւորավայել անսահ-
ման երջանկութիւնը:

Մալբին մնացել էր զարմացած, թէ ինչպէս մի
քանի լոպէսում մի գիւղացի աղջկայ սէրը, կարծես
մազնիսական ձգտողութեամբ, ձգտեց դէպ իրեն,
թագաւորի որդու սէրն ու սիրտը:

Մեծ իշխան մենք կը գնանք տուն, բոլոր ման-
րամանութիւնները կը պատմենք քո հօրը, կը յայտ-
ենք նորան քո սրտի ցանկութիւնը գուցէ նա յօ-
ժարութիւն յայտնէ:



ԻԱ

արկաչիւն աղբիւրի մօտ ծաղ-
կահիւս գորգերի վերայ փը-
ռեցին երկար սփռոցը, Պըճ-
նազի ծառաները զարդարեցին
սփռոցը անուշահամ ուտելիքներով և ըմպելի-
ներով:

Պճնազը, Մալբին և բոլոր թիկնապահները
բոլորեցին առատ սեղանի շուրջը և մաքուր օդի մէջ
պարզ աղբիւրի մօտ, սկսեցին վայելել քաղցրահամ
ճաշը:

Պճնազի հրամանով կամաց կամաց պատրաս-
տուեցին ճանապարհ գնալու:

Պճնազը իր ընկերներով սկսեցին շարունակել
ճանապարհը:

Գնում էին նորանք խիտ անտառների միջով,
անցնում էին կարկաչահոս վտակների երեսով: Գնա-
ցին և երեկոյեան հասան տուն:



ԹԲ

ազաւորը և Թագուհին գտան-
վում էին ամենալաւ տրա-
մադրութեան տակ: Նորանք
նստած էին գեղեցկաշէն պատ-
շգամքում, ոսկեզարդ Թախտին:

Պճնազը և Մալբին ցած իջնելով ձիաներից,
գնացին և խոր գլուխ խոնարհեցնելուց յետոյ նստե-
ցին նորանց մօտ:

Ի՞նչպէս էք, հարցրեց Թագաւորը:

Պճնազը լուռ էր, ոչինչ չըխօսեց, իսկ Մալբին
իբրև յայտնելու իր խորին շնորհակալութիւնը, մաղ-
թեց Թագաւորին և Թագուհուն երկար և բարե-
բաղտ կեանք:

Խօսում էին ամենքը, ծիծաղում էին, զուար-
ճանում էին տեսակ տեսակ խօսակցութիւններով:

Պուռ էր միայն Պճնազը, նման էր նա անդորր
ծովին, նորա կամարակապ ունքերը մըրկել էին և
կիտուել վառվուռն աչերի վերայ, ոչինչ չէր խօ-
սում, այլ մի անկիւնում նստած անդադար ծխում էր:

Թագուհու սիրտը յուզուեց տեսնելով որդու տը-

խրամած պատկերը, նա կարծեց, թէ Պճնազը հի-
ւանդացել է, բայց ամուսնու առաջ չէր ցանկանում
մի բան խօսել և որդուց տխրութեան պատճառը
հարցնել:

Լռեց և Թագուհին:

Պճնա՛գ, ի՞նչու չես խօսում, ի՞նչ ես խորասու-
զուել, ի՞նչի վերայ ես մտածում, հարցրեց վերջա-
պէս Թագաւորը:

Պճնազը ամօթխածութիւնից չըկարողացաւ մի
բան խօսել, միայն լուռ տեղից բարձրացաւ և դան-
դաղ քայլերով դիմեց դէպի տան առաջին գտանվող
այգին:

Ո՛հ Աստուած, որդիս հիւանդ է, ասաց բար-
ձրը ձայնով Թագուհին և փութալով տեղից վեր
Թռաւ և շտապեց որդու մօտ:

Թագաւորը մնաց ապշած և չըխօսեց:

Պճնազ, սիրելի որդիս, սիրտս կոտրատվում է,
ասա, ինչու ես տխուր ինչու ես մոլորուել, ասա որ-
դիս, հիւանդ հօ՛ չես:

Պճնազը ոչինչ չըխօսեց:

Թագուհին մոռացած ամեն տեսակ վարմունք
բարձր ձայնով սկսեց գոչել ամուսնու առաջ, Մալ-
բի, սիրելի զօրապետ, աղաչում եմ, ինչու որդիս
մոլորուած է ինչու այսպէս տխուր է, ասա:

Հանգիստ եղէք թագուհի, Պճնազի հետ ոչինչ չէ պատահել, նորա տխրութիւնը չնչին բանի համար է, հանգստացէք, ահա ողորմած թագաւորի ներկայութեամբ պատմեմ ձեզ Պճնազի տխրութիւնը:

Պատմիր, շուտով պատմիր, Մալբի, սիրտս կըտրատվում է:

Բաւական է, այ կին, հանգստացիր, ասաց զարմացած ձայնով թագաւորը:

Մալբին բոլորը մանրամասնաբար պատմեց Պճնազի և Ալագեօզի մասին:

Թագաւորի հանդարտ և մեղմ դէմքի երեսը կարծես մի մռայլապատ ամպով ծածկուեց, խոժոռուեց:



ԻԳ

Իծաղելու առարկայ պիտի դառնամ ամենքի առաջ, խօսեց թագաւորը, միթէ այնպիսի գեղեցկութեամբ կամ այնպիսի համակրելի օրիորդներ քիչ կան թագաւորների մօտ, — թողնել թագաւորի աղջկերք ու առնել ամենաաղքատ մի գեղջկուհի, միթէ՞ ամօթ չի բերիլ մեր թագա-

ւորութեանը: Մեր զահին պէտք է բազմեցնել մի որ և իցէ ստոր գիւղացու աղջիկ, ոչ, երբէք իմ կողմանէ համաձայնութիւն չեմ տալ:

Ամենաողորմած արքայ, ես որքան ոյժ փորձեցի Պճնազի զլսից հեռացնել այդպիսի մտքերը, բայց նա մինչև անգամ թաց, թէ «պատրաստ եմ թողնել իմ հօր արքունիքը, թողնել արքայական զահը, փառքը, միայն անջատուել նորանից երբէք»:

Թագաւորն էլ չըխօսեց, լռեց: Նա այն ժամին նման էր մի ալեկոծեալ ծովի:

Մալբին բարձրացաւ տեղից և խոր գլուխ խոնարհեցնելով հեռացաւ:



ԻԳ

նցաւ մի քանի օր. թագաւորն ու թագուհին որքան փորձեցին Պճնազին համոզեցնելու, որ հեռու մնաց այնպիսի մտքերից, բայց նորանց ջանքը զուր անցաւ:

Պճնազի միտքը հաստատ էր, Ալագեօզի սերը նորան հանգստութիւն չէր տալիս:

Այն օրուանից սկսած երբ պատահել էր Ալա-
զեօզին, մոլորուած ոչխարի նման աննպատակ թա-
փառում էր ազգիներում, ոչ ուտում էր, ոչ խմում,
ոչ մի գործ էր ձեռքն առնում և օրըստօրէ մաշվում
էր: Նորա կարմիր այտերի գոյնը սպառվում էր,
նորա վառվռուն աչքերի լոյսը կարծես նուազում էր:

Տեսնելով, որ էլ ուրիշ չար չըկայ, թագաւորը
տեսնելով որդու այսպէս հալ ու մաշ դառնալը, տես-
նելով նորա մոլորուելը, նորա սիրտը սկսեց բորբո-
քուել և նա վճռեց որդուն հասցնել իր բաղձանքին:



ԻԵ

Եժամեժ ընծաներով թագաւորը մար-
դիկ ուղարկեց աղքատ Ոսկերչի մօտ
յայտնելու իրենց ցանկութիւնը:

Մի գեղեցիկ առաւօտ էր, երբ թագաւորի մար-
դիկը ուղևորուեցան դէպի Ոսկերչի տունը:

Երեկոցեան պահուն հասան այնտեղ:

Նրանք համարցալորէն մօտան Ոսկերչի բազը:

Այդ ժամանակ Ալազեօզը նստած ճախարակ էր
մանում: Անապատելի հիւրերին տեսնելուն պէս, նորա
երեսի գոյնը թուաւ և մնաց լուռ նրանց նայելիս:

Թագաւորի մարդիկներին մէկը մօտեցաւ Ալա-
զեօզին և համեստութեամբ խնդրեց, որ իրենց
վաստակած ճանապարհորդներին տեղ տայ իջևանե-
լու, քիչ կազդուրուելու ճանապարհին կրած նեղու-
թիւններից:

Մեծ ուրախութեամբ կրնդունէի ձեզ, իբրև Աս-
տուծոյ հիւրերին, միայն ներեցէք, որ ձեր քաղցը
յազեցնելու կարողութիւն չունիմ:

Մենք մեզ հետ առած ենք մեր ամեն պատ-
րաստութիւնները, այդ կողմանէ դուք անհոգ մնա-
ցէք, պատասխանեց իշխաններից մէկը:



ԻԶ

Լազեօզը փութացաւ հարևանի
տունը՝ նրանից մի գորգ խնդրե-
լու հիւրերի տակը զցելու համար:

Ի՞նչ կայ Ալազեօզ ուլքեր են դորանք, հարցրեց
հարևանը:

Դեռ չըզիտեմ, միայն ինձ խնդրեցին մի առ-
ժամ հանգստանալու մեզ մօտ, ապա շարունակելու
երկար ճանապարհը:

Տար սիրելի Ալագեօզ, տար գորգը, ապա եկ
ընթրիքի համար էլ ինչ կուգես տար:

Այն ընթրիքի համար չեմ հոգում, որովհետեւ
ես արդէն ասացի նորանց, որ ընթրիք պատրաստե-
լու կարողութիւն չունիմ, իսկ նրանք էլ մեծ պատ-
րաստութիւնով են եկած, երեւի այստեղից էլ հեռու
պէտք է գնան:

Հիւրերը բազմեցին շքեղ գորգի վերայ և ըս-
կեցին զանազան հարցերով զբաղուել Ալագեօզի հետ:

Վերջինս առանց ամօթխածութեան, համես-
տութեամբ պատասխանում էր նորանց հարցերին:

Ո՞րտեղ է քո հայրդ, հարցրեց իշխաններից մէկը:

Նա փայտ բերելու գնաց, պատասխանեց նա:

Իսկ քոյր կամ եղբայր ո՞ւնիս:

Եղբայր չունիմ, լոկ երկու քոյրեր ունիմ:

Դու ցանկութիւն չունիս ամուսնանալու, հարց-
րեց Ալագեօզին իշխաններից մէկը:

Ոչ:

Ինչո՞ւ:

Նորա համար, որ ինձանից յետոյ հայրս և քոյ-
րերս կարող են քաղցից մեռնել, նորանց ո՛վ այ-
նուհետեւ կրկնամէ, կրկերակրէ:

Իսկ եթէ ամուսնանաս այնպիսի մարդու հետ,
որի խնամատարութեան տակ կարողանաս պահել
հօրդ ու քոյրերիդ:

Նա չեմ կարծում, ով պատուական մարդիկ, որ
մի այնպիսի հարուստ խնամատար մարդ ցանկա-
նայ ինձպէս մի թշուառ գեղջկուհու վերայ ամուս-
նանալ և մինչև անգամ վերցնէ քոյրերիս ու հօրս
ու խնամէ նորանց, ասաց Ալագեօզը մի թեթեւ ժը-
պիտ խաղացնելով իւր մեղմ շրթունքների վերայ:

Իսկ եթէ լինի թագաւորի որդի, ասաց իշխանը:

Դուք երեւի ծաղրելու եկաք այստեղ, խօսեց
ժպտադէմ Ալագեօզը:

Ոչինչ ծաղրելու կարիք չունենք մենք, իրաւ
ենք ասում, ասացին իշխանները միաբերան:

Ալագեօզը լռեց:





ԻԷ

շխաններից մէկը հանելով Թագաւորի ուղարկած ակնէղէներն ու զոհարները և զնելով Ալադեօզի առաջ ասաց. եթէ մենք սուտ ենք ասում այժմ հաւատացէք, որ դուք սխալվում էք: Յիշում էք արդեօք այն օրը երբ Թագաւորի որդին ձեզանից տասանորդ պահանջեց և դուք խնդրեցիք, որ նա չըվերցնէ, յիշում էք որ նա ձեր խնդիրքը անկատար չըթողեց:

Այն օրուանից, դուք նորա սիրտը միանգամայն յափշտակեցիք: Այն օրուանից սկսեալ ձեզ համար հալ ու մաշ է դարձել, նորա բոլոր միտքը ձեզ վերայ է, նորան հալ ու մաշ անողը ձեր կարօտալի սէրն է: Եւ ահա Թագաւորի հրամանով եկել ենք նորա ցանկութիւնը յայտնելու:



ԻԸ



Ալադեօզն ասաց. մինչև որ չապահովացնեմ հօրս և քոյրերիս ես զալ չեմ կարող:

Մենք կըտանք հօրդ այնքան ոսկի, այնպիսի ապրուստ, որով նա կարող է արքավայել կեանք վարել, միայն դուք յայտնեցէք ձեր համաձայնութիւնը: Ես համաձայն եմ:

Ուրեմն ընդունեցէք այս մատանին, եւ Թագաւորի յատուկ ուղարկած մատանին իշխաններից մէկը տուաւ Ալադեօզին:

Ալադեօզը մատանին առաւ և գցեց իր մատը: Իշխանների ուրախութեանը չափ չըկար, նորանք փութալով մի թեթև ընթրիք վայելելուց յետոյ վերկացան ասելով Ալադեօզին. պատրաստ եղէք, որ դուք վաղը ձեզ տանենք Թագաւորի ապարանքը հարսանեաց հանդէսը կատարելու:





ԻԹ

իշեր էր:

Կապույտ երկնականարի երեսով, նուրբ ամպերի միջով սահում էր բոլորածեղումներ:

Իշխանները հեռացան Ալազանից և ուղղեցին իրենց ճանապարհը դեպի Թաղաւորի ապարանքը:

Նրանցից յետոյ եկան տուն Ոսկերչը և իր աղջիկները:

Ալազեօզն այն օրուայ անցքը, այն օտարօտի լուրը մանրամասնաբար պատմեց հօրը:

Ոսկերչը չափազանց ուրախացաւ: Գնա, սիրելի Ալազեօզ, ասաց նա, գուցէ քո ճակատին գրուած է, որ Թաղաւորի հարս պիտի լինես և յիրաւի մենք կարող ենք այն ժամանակ չափազանց լաւ ապրել, ես էլ յաճախ կ'ացելեմ քեզ, չեմ թողիլ քեզ կարօտութեան մէջ: Գուցէ այն ժամանակ կարողանանք

մի կերպ Թաղաւորի ոսկիների ոյժով քոյրերիդ էլ ամուսնացնել:

Այո, սիրելի Հայր, Աստուծոյ զթաուատ ձեռքը ճակատագրել է ինձ լինել Թաղաւորի և ահա այժմ նա մղում է ինձ դէպի այն արքունիքը բազմեղու գահի վերայ: Ես գնում եմ բաց ձեռքանից իսպառ չեմ անջատվում, կաշխատեմ որքան հարկն է սիրելի լինել Թաղաւորին և Թաղաւորն և նորա պաշտօնականներին և այնուհետեւ կարող եմ անել այն ամենն ինչ որ ցանկանամ, կարող եմ մինչև անգամ ձեզ ևս տանել ինձ մօտ և Թաղաւորի արքունիքում բնակեցնել:



Լ

Ամբողջ զիւղը տարածուեց այս օտարօտի լուրը:
Ամենքն էլ ուրախ էին:

Ես հէնց ասել էի, որ Ալադեօզը կըհասնի մի
փառքի և ահա իմ գուշակութիւնը սխալ չեղաւ,
ասում էր մի աղեղարդ ծերունի:

Ես էլ հէնց եղպէս էի կարծում, ասում էր մի
ուրիշը:



ԼԱ



րկու օրից յետոյ Թագաւորի տանը
հարսանեաց հանդիսի համար մե-
ծամեծ պատրաստութիւններ տես-
նելուց յետոյ, մեծամեծ ընծաներով
մարդիկ ուղարկուեցին Ալադեօզի
մօտ:

Ալադեօզը բոլոր ոսկիքը տուաւ
հօրը, սիրտ տուաւ նորան, ապա զը-
նաց բոլոր հարեաններին իր վեր-
ջին հրաժեշտը յայտնեց, նորանց
ձեռները համբուրեց և ամենից նե-

րողութիւն խնդրեց:

Հարեանները համբուրելով նորան ասացին. գը-
նա սիրելի Ալադեօզ, դնա մեր ամենիս պարծանք,
տար քեզ հետ մեր բոլոր սէրն ու սիրտը, չըմոռա-
նաս քո վաղեմի բարեկամներին, չըմոռանաս քեզ
սիրող հայրենակիցներդ: Կրկին համբուրելով Ալա-
դեօզին, կրկին կուրծքերին սեղմելով այն քնքոյշ գը-
լուխը ճանապարհ ձգեցին:

Երրորդ օրը Պճնազը մեծամեծ իշխաններով,

զօրապետներով ու զօրքերով, երաժիշտներով ու զանազան նուագհարաններով և իր սիրելի զօրապետ Մալբիի հետ եկաւ Ալագեօղին տանելու:

Զարդարուել էր Ալագեօղը, պճնուել էր մարքարիտներով ու զոհարներով, փառաւորուել էր հազար տեսակ պսպղուն ակներով, ով տեսնում էր մընում էր հիացած, ապշած և երկար ժամանակ աչքը չէր կարենում նորանից հեռացնել:



ԼԲ

րկին գրկեց հօրը, համբուրեց քոյրերին և արտասուաթոր աչերով հեռացաւ: Նա նստեց մարքարտազարդ թամբով սպիտակ երիւթարի վերայ, ոտները արծաթէ ասպանդակների մէջ դրաւ, իսկ սանձնառաւ թաղաւորի զօրապետներին մէկը:

Նորա մօտով գնում էր Պճնազն իր սևաթուր նժոյգի վերայ: Նոցա առջև ծածանում էին երկու շքեղագոյն դրօշակներ, որոնք բռնած ունէին ձեռներին երկու պճնազարդ իշխաններ:

Ալագեօղի հայրը, քոյրերը, բոլոր հարեաններն, երկար ուղեկից եղան նորանց, յետոյ կրկին ջերմ գրկախառնութեամբ համբուրեցին նորան, օրհնեցին և վերադառնան տուն:

Ոսկերչի աչքերի արտասուքը չէր դադարում և նա երկար ժամանակ Ալագեօղի յետևից նայում էր անթարթ աչքերով, նայում էր դառն հառաչանքներով: Վերջապէս Ալագեօղն իր ձանադարհորդակիցների հետ անհետացաւ Ոսկերչի աչքից, մի խոր ախքաշելով, Ոսկերչը վերադառնաւ տուն:





ԼԳ

քեզաշուք հանդիսով Ալազեօ-
զը Պճնազի, զօրապետների
ու զօրքերի հետ հասաւ թա-
գաւորի ապարանքը:

Նորանց դիմաւորեցին զը-
րեթէ ամբողջ քաղաքը՝ ծե-
րեր թէ երիտասարդներ, կա-
նաչք թէ մարդիկ, բոլորն
շքեղ զարդարուած, բոլորն
ուրախ անհամբեր սպասում էին Պճնազին ու նորա
հարսին:

Մարմարաշէն պալատների գաւթում ցած ի-
ջեցրին Ալազեօզին:

Սանդուխտների վերեւ դիմաւորեցին թագաւո-
րը և թագուհին, որոնք համբուրեցին նորանց ե-
րեսներից և տարան շքեղազարդ զահլիճը, ուր նո-

րանց համար առանձին պատրաստած ոսկեզարդ ա-
թոռների վերայ բազմեցրին:

Գաւթիթում խմբուած ժողովուրդին այն օրը
մեծ ճաշ տուին և այն օրից սկսած եօթն օր
մեծ հանդիսով հարսանիք կատարեցին:

Օրհնում էին ամենքը թագաւորին և նորանց
նորապսակ որդոցը. երկար կեանք էին մաղթում:

Ալազեօզի հօր տունը ազատուեց հարկից:



ԼԴ

նցաւ մէկ տարի այն
օրից, երբ Ալազեօզը զըր-
կուել էր հօր գգուանքից և ապրում էր թա-
գաւորի պալատների մէջ: Ոսկերչը չէր տեսել իր
աղջկան, նորա ոսկիքն շնորհիւ իր մեծ օրիորդնե-
րին բոլորն սպառուել էին և նա ընկել էր իր
նախկին զրութեան մէջ: Ծնշվում էր նա դարձեալ
աղքատութեան լծի տակ:

Խնչիս է պէտք թէ իմ աղջկիս թագաւորի
հարս է, երբ ես առանց նորա ապրել չեմ կարե-
նում, ասում էր ամենայն օր Ոսկերչը, — ասում էր
և հալ ու մաշ զառնում:

Ալազեօզն էլ նմանապէս առանց հօրը և քոյրերին չէր կարենում վայելել արքայավայել երջանկութիւն:

Թագաւորի արքունիքումն էլ ոչ ոք չէր կարեկցում նորան, ոչ Թագաւորը, ոչ Թագուհին, ոչ զօրապետները, ոչ մեծամեծ իշխանները: Վերջիններս աւելի նախանձաբար էին վարվում նորա հետ, որովհետև շատերի փափաղը Ալազեօզն անկատար թողեց, շատերի աղջկերանց սիրտը Ալազեօզը կոտրեց Թառամեցրեց: Իսկ Ժողովուրդը իրեն աչքի պէս էր սիրում նորան: Պճնազի սէրն էլ Ալազեօզի հետ աննկարագրելի էր: Պճնազը տեսնելով նորան տխուր, իր սիրտն էլ կոտրտվում էր, աղաչում էր իմանալ նորա տխրութեան պատճառը, խնդրում էր, բայց Ալազեօզը չէր յայտնում և իր տխրութիւնը ծածկում էր իր սրտի խորքերի մէջ:



ԼԵ

Ի որ Ոսկերչը մտածեց գնալ Թագաւորի քաղաքը: Գուցէ կարողանամ տեսնել իմ սիրելի Ալազեօզին, ասում էր նա:

սում էր նա:

Վճռած օրը երեկոյեան պահուն հոգնած վատակած Ոսկերչը հասաւ քաղաք, մօտեցաւ Թագաւորի ապարանքին և մնաց կանգնած:

Նայում էր Ոսկերչը այն շքեղաշուք պալատներին, նայում էր և վախում էր մօտնել:

Մտնեմ, ինչ էլ որ լինի: Երկար մտածելուց յետոյ վճռեց Ոսկերչը:

Հէց կամեցաւ մօտնել դաւիթը, դուռը բացաւ, երկու քայլ առաջ փոխեց, յանկարծ մօտեցան երկու ծառաներ և նորանից հարցրին զայլու պատճառը:

Երբ խեղճ Ոսկերչը միամիտութեամբ ասաց, որ ինքը նոր Թագուհու հայրն է և ուզում է տեսնել, ծառաները ծաղրելով նորան և մի քանի հարուածներ տալով դուրս ձգեցին խեղճին:

Վիզը ծռած, գլուխը քարշ խոնարհեցրած, աչքերից դառն արցունքներ Թափելով կնճռապատ այտերից կանգնած էր Ոսկերչը և ընկզմուած դառն մտքերի մէջ:

Տեսնում ես, սիրելի Ոսկէհատ, երջանկութիւնը կախուած չէ հարստութիւնից, աւելացրեց հառաչելով իշխանուհի Հուրին:

Տիկին Ոսկէհատը սկսեց շարունակել պատմութիւնը:



L.2

րեգակը մօտենում էր արեամտեան հորիզոնին և պատրաստվում էր թափել սարերի յետև:

Երկար օրը, ջերմութիւնից հոգնած, Ալազեօզը դուրս եկաւ և փառաւոր պատշգամբի վերայ սկսեց անց ու դարձ անել:

Խոր մտածմունքից սթափուելով, Ոսկերչը զըլուխը բարձրացրաւ, նայեց թափաւորի վայելչաշէն պալատներին:

Յանկարծ նորա աչքն ընկաւ Ալազեօզին և ըսկսեց անթարթ աչքերով նայել, արդեօք Ալազեօզն է նա, ա'խ եթէ նա է, միթէ ինձ չէ տեսնում, ո'հ, որքան փոխուել է:

Մօտեցաւ Պճնազը նորան և նորա ձեռները առաւ իր ափերի մէջ:

Այս տեսարանին ականատես լինելով, Ոսկերչը իսկոյն իմացաւ, որ նա իր դուստր Ալազեօզն է. կանգնեց նորանց դէմ, որ իրեն աւելի լաւ տեսնեն:

Հեռանալով Ալազեօզը Պճնազի մօտից, սկսեց անց ու դարձ անել այս ու այն կողմը:

Իսկ Պճնազը առանձնացած նստեց պատշգամբի մի կողմում և սկսեց նայել փողոցում անց ու դարձ անող մարդկանցն ու կանանցը: Մօտեցաւ Ալազեօզը թեքը դնելով Պճնազի ուսին և սկսեց նայել դէպի փողոց:



L.3

էնց աչքերը դէս ու դէն ման ածեց, յանկարծ տեսաւ փողոցի մի անկիւնում մի դալկահատ ծերունի կանգնած, վիզը ճռած, ձեռները ծոցին, անթարթ աչքերով նայում է իրենց:

Որքան նման է հօրս, մտածում էր Ալազեօզը, բայց նա այսքան նիհար չէ, երեւի փոխուել է ինձանից յետոյ: Ապա դառնալով դէպի Պճնազն ասաց. սիրելի Պճնազ, այն թշուառ ծերունին հօրս եմ նմանեցնում:

Պճնազը հէնց որ նայեց, իսկոյն ճանաչեց: Այո նա է, սիրելի Ալազեօզ, ուրեմն այս բոպէիս կանչենք այստեղ, ասաց Պճնազը ու փութով մարդ ուղարկի Ոսկերչին իրենց մօտ կանչելու:

Գնացին մարդիկը կանչեցին Ոսկերչին ու տա-
րան թագաւորի որդու մօտ:

Գնաց Ոսկերչը: Բարձրանում էր ապշած և մի-
անգամայն հիացած մարմարաշէն սանդուխտներից:
Բարձրացաւ ու սանդուխտների վերեւ ընկաւ Սլա-
գեօզի գիրկը: Համբուրեց և Պճնազին, վերջինս նո-
րան:

Բոլոր տեսնողները մնացին զարմացած այս օ-
տարոտի տեսքի վերայ. զարմացան թէ ինչպէս մի
կեղտոտ ցնցոտիների մէջ փաթաթուած աղքատ մարդ
առատութեամբ վաչելում է թագաւորի որդուց և
հարսից ջերմ համբոյրներ, կամ թէ ինչպէս վերջին-
ներս անսահման ուրախութեամբ, ջերմ գրականառ-
նութեամբ համբուրում էին նորա կեղտոտ ձեռները:

Սլագեօզի սիրտը չըհամբերեց, ուրախութիւնից
նորա աչքերից առատահոս արցունքներ սկսեցին
ջրել այտերը:



անց



ԼԸ

Ճնազի հրամանով փութով Ոս-
կերչին նստեցրին փառաւոր կառ-
քի մէջ տարան բաղնիք: Լուացուեց և զարդարուելով
իշխանավայել հագուստներով, եկաւ արքունիք:

Պճնազը, Սլագեօզը և Ոսկերչը երեկոյեան թա-
գաւորի հետ հացկերոյթից յետոյ, առանձնացած մի
սենեակում զբաղուած էին զանազան խօսակցութիւն-
ներով:

Պճնազն ասաց Ոսկերչին. ես այլ ևս չեմ թոյլ տալ,
որ դուք զնաք, վաղը բերել կրտամ ձեր երկու օ-
րիորդներն էլ այստեղ և կ'աշխատեմ նորանց ևս բաղ-
տաւորացնել, ամուսնացնելով մեծամեծ իշխանների
հետ:

Չափ չըկար Ոսկերչի ուրախութեան, լսելով իր
ապագայի բարեբաղտութիւնը:

Երկար խօսելուց յետոյ պառկեցին քնելու:





ԼԹ

ետեալ օրը Պճնազի հրամանով բերին Ոսկերչի երկու մեծ աղջիկները Թաղաւորի ապարանքը: Մի առ ժամանակ ապրելով Ալազեօզի մօտ, Պճնազի օդնութեամբ նորանք ևս ամուսնացան մեծամեծ իշխանների հետ:

Վերջացաւ այնուհետեւ Ալազեօզի ցաւերը, ազատուեց նա սրտամաշ մտքերից. նորա գունատ այտերը կրկին ստացան իրենց կարմիր դոյնը, աչքերը սկսեցին երկու վառվռուն աստղերի պէս փայլել և ամեն օր ուրախութեան ժպիտը չէր հեռանում նորա մեղմ շրթունքներից: Իսկ Պճնազը տեսնելով իր սրտի սիրելին իր ցանկացած դրութեան մէջ, ուրաք սրտիւ վայելում էր այնուհետեւ նորա աննման սէրը, վայելում էր և իրեն հաշվում այն ժամանակ ամենաերջանիկը:

Ուրախ էր և Ոսկերչը, որ իսպառ ազատուեց ամեն չարչարանքներից, նեղութիւններից, ապրում էր աբբայաւայել երջանկութիւնների մէջ, ուրախ էին և ամեն բարի մարդիկ, տխուր և նախանձիւմ էին չարերը:



ԼԽ

Երբն, սիրելի Հուրի, Աստուած որ նորանց անսպասելի բաղդաւորութեան արժանացրաւ, նա կարժանացնէ և ամեն մի կարօտեալի իր բաղձանքին, նորա ընդարձակ ձեռքը լի է առատութեամբ և նա երբէք չէ խնայում իրեն ապաւինեալներին:



Ե

բեք օր էր արդէն որ իշխա-
նը բացակայ էր իր ա-
պարանքից:

Չորրորդ օրը, երկար ճա-
նապարհորդութիւնից, նա վերադարձաւ տուն:

Իշխաններից մէկն աւետիք բերաւ իշխանու-
հուն, վերջինս լսելով իշխանի դալուստը, փութով
տեղից բարձրացաւ և շտապեց հանդիպել ահաւանուն:

Պռան մօտ իշխանը գրկեց նորան և մտան
սենեակ:

Իշխանուհին սկսեց հարցնել նորա առողջու-
թիւնը:

Շատ յաջողակ անցաւ մեր ճանապարհորդու-
թիւնը, սիրելի Հուրի, միայն ճանապարհին մի դէպք
պատահեց և եթէ քեզ պատմեմ զուցէ քիչ ուրա-
խանաս, միայն թէ իրադործուի:

Ինչ է՞ պատահել, պատմիր շուտով, ասաց ան-
համբերութեամբ իշխանուհին:

Սպասիր քիչ՝ ջուր խմեմ, զովանամ ապա պատ-
մեմ:

Մարալը արծաթէ ամանի մէջ պարզ և սառը
ջուր բերաւ:

Իշխանը խմեց, ապա սկսեց պատմել:



Ի

Իրելի Հուրի, մենք իջևանեցինք մի
գիւղի մէջ: Ինձ ասացին՝ թէ այդ
գիւղումը մի կախարդ կին է բնակ-
վում, գուշակում է մարդուս ապա-
գան:

Ինձ մօտ բերելով այն կախարդին, հարցրի նո-
րանից մեր ապագայի գուշակութիւնը, նա ասաց.
Թէ մենք մէկ տարուց կունենանք մէկ որդի: Միայն
նա այս էլ աւելացրեց. նախ նա կամուսնանայ մէկ
թագաւորի աղջկայ հետ, ապա մէկ վաճառականի
և վերջապէս մի ածխագործի աղջկայ հետ ու մինչև
իր մահը նորա հետ միայն երջանկութեամբ կապ-
րէ: Թագաւորի և վաճառականի տեղը չըկարողացաւ
իմանալ, իսկ ածխագործի տեղն ասաց. որ ես ար-

դէն ճանաչեցի, նա գտանվում է իմ հպատակութեան տակ: Միայն զլխաւորն այն է, որ նա զաւակ չունի, երեւի նա էլ յետոյ պէտք է ունենայ:

Դա շատ լաւ է, սիրելի Նահապուր, այդ ոչինչ, թէ՛ մենք ածխագործի աղջիկ կ'ունենանք հարս. գէթ միայն մենք որդի ունենանք:

ԽԳ



նցաւ մէկ տարի այն օրից. իշխանուհի Հուրին յղացաւ և մէկ տղայ որդի ունեցաւ, որին կոչեցին Նահալմաս:

Թնդաց զղրդաց Նահապուր իշխանի երկիրը, ամեն տեղ արագութեամբ հասաւ այդ ուրախալիլուրը: Ամեն տեղ մեծամեծ իշխանների մօտ աւետիք ուղարկուեցին:

Չափ ու սահման չըկար Նահապուր իշխանի ուրախութեանը:

Հուրի իշխանուհու ուրախութիւնն էլ աննկարագրելի էր:

ԽԴ

Նարունակ մի ամբողջ շաբաթ մեծամեծ խնջոյքներ արաւ Նահապուր իշխանը: Պարում էր, անդադար ծիծաղում էր իր հիւրերի հետ. նորահպատակների ուրախութեանն էլ չափ չըկար: Ուրախ էին որ իրենց իշխանական գահը վերջ ի վերջոյ թափուր չի մնալ կամ ուրիշի ձեռք չի ընկնի:

Հիւրերը կապոտեցին իշխանի ոտները, վաչր զցեցին դահլիճի մէջ և կանչեցին իշխանուհի Հուրին ու ասացին, իշխանուհի, մեզ ինչ էք թալիս, որ ձեր պատուական ամուսնոյն կապանքները քակենք:

Իշխանուհին ժպտաց և ասաց. կարող էք Նահապուրից իմանալ. թողէք նա ինքը ձեզ վարձատրէ:

Իսկ Նահապուրը թողեց իշխանուհու վերայ և ասաց. երեսան ես չեմ ծնել, այլ ինքն է ծնել, ուրեմն առ այժմ երեսայի փոխարէն մացրը կարող է ձեզ վարձատրել:

Իշխանները վերջապէս ստիպեցին իշխանուհուն: Իշխանուհին ասաց. մի ամբողջ տարի թող բոլոր հպատակներն ազատ լինեն հարկից և ինչքան բանտարկուածներ կան, նրանք էլ թողէք ազատուին բանտից:

Իշխանները զոհ մնալով այս նուէրից, արձակեցին իշխան Նահնավուրի ռոնները և սկսեցին զուարճութիւնները շարունակել:



ԽԵ

Իշխան Նահնավուրի ապարանքում տիրեց ընդհանուր լուռութիւն:

Ամենքն էլ սկսեցին իրենց զործերով զբաղուիլ:

Իշխանուհի Հուրին դեռ չէր կշտանում անչափ ուրախութիւններից: Առաւօտից մինչև երեկոյ որդին առած իր գիրկը խաղեցնում էր:

ԽԶ

Անցաւ մի քանի տարի: Փոքրիկ Նահալմասը օրըստօրէ մեծանում էր, նորա երակները հաստանում էին և ստանում էր նա քաջ և յաղթանդամ հըսկայի կերպարանք:

ԽԷ

Նահնավուր իշխանի զբացին, որ իր նախարարներից ամենասիրելին էր, ունէր մի աղջկի. սա մտքումը դրել էր ամուսնացնել Նահալմասի հետ, բայց տեսնելով ամխագործի հետ ունեցած յարաբերութիւնները և իմանալով բանի էութիւնը, նորա նախանձը շարժուեց և մտքումը դրեց սպանել ամխագործի նորածին աղջկան:

Կանչեց իր սիրելի ծառաներից մէկին և յայտնեց իր սրտի խորհուրդը:

Ծառան իսկոյն յանձն առաւ, միայն ասաց, որ պէտք է բաւականին ոսկի և ակնեղէն տայ իրեն, որպէս զի զորանց ոյժով, մի հնարք զանէ սպանելու փոքրիկ, անմեղ աղջկան:

Իշխանը ոչինչ չըխնայեց և նորա պաշուսակը լքցրեց անչափ ոսկիներով ու թանկագին ակնեղէններով, որոնց մէջ և սխալմամբ դրեց իշխան Նահնավուրի նուիրած մանեակը, ապա յանձնեց ծառային:

Ծառան վեր առաւ պաշուսակը և կամաց կամաց դիմեց ամխագործի տունը:



ԽԸ

րեկոյեան պահուն հա-
սաւ այնտեղ և մտաւ

ներս: Տեսաւ ածխագործին և իր կնոջը նստած
թախտի վերայ զուարճանում էին փոքրիկ մանու-
կով: Խոնարհութեամբ զլուխ տուաւ և ասաց:

Ընդունեցէք հոգնած ձանապարհորդիս ձեզ մօտ
քիչ հանգստանալու:

Մեծ ուրախութեամբ, միայն որ մեր հացը
սպառուած է և դեռ Շահնավուր իշխանից հաց
չենք ստացել:

Ձեր հացը ինձ հարկաւոր չէ, ես ամեն ինչ
ունիմ, միայն ես թանկագին բեռ ունիմ և ուզում
եմ այս զիշեր ձեզ մօտ մնալ, իբրեւ ապահով տեղ,
ապա առաւօտեան շարունակել ճանապարհս:

Վերջապէս ածխագործը համոզուեցաւ ընդու-
նելու նորան: Գիշերը երկար խօսակցութիւններից
յետոյ ածխագործն ասաց նորեկ հիւրին. մենք պէտք
է շուտ քնենք, որպէս զի կարողանանք վաղը շու-
տով վերկենալ:

Լաւ, ասաց հիւրը և իր շորերով սկսեց պառ-

կել, միայն աչքերը փակեց և դեռ արթուն մնաց:
Այ կին, տեսնես ինչ թանկագին բաներ են սո-
րա պապուսակի մէջ, ասաց ածխագործը, եկ տեսնենք:
Լաւ, տեսնենք, ասաց կինը:

Ածխագործը բացեց պապուսակը և տեսնելով
փայլուն, պսպղուն ոսկիներն ու ակնեղէններն մնաց
միանգամայն ապշած:

Եկ, այ կին թաղցնենք այս պապուսակը, առա-
ւօտեան ասենք՝ թէ ոչինչ չենք տեսել:

Կինը համաձայնուեց:

Ածխագործը վերցրեց պապուսակը և դրեց թախ-
տի տակ ու մի շորով պինդ ծածկեց:

Նորանք ևս սկսեցին քնել:

Այս խօսքերը բոլորը լսում էր ստաբուն հիւ-
րը, երբ տեսաւ բոլորը ընկղմուած խոր քնի մէջ,
տեղից վերկացաւ հանեց դաշոյնը պատեանից և
փութալով կոխեց օրօրօցում քնած մանուկի սիրտը,
այս ու այն կողմը նայեց, որ պապուսակն էլ վերցնէ,
շփով վեց, տեղը չբոցաւ միայն շտապելով դուրս
վազեց ու փախաւ: Այն զիշերը հասաւ իշխանի
տունը: Բոլոր մանրամասնութիւնները պատմեց իշ-
խանին: Վերջինս ուրախութիւնից ասաց. դէ, թող
այսուհետեւ անպիտան կախարդները լաւ գուշակեն,
թող Շահնավուր իշխանը հաւատայ չիմարներին,

ուրեմն լաւ է, դարձեալ կըհասնեմ իմ նստատակիս:



ԽԹ

առաօտեան երբ ածխա-
գործը և իր կինը արթ-
նացան, տեսան փոքրիկ ման-
կան կարմիր արիւնի մէջ
լողալիս, մնացին ապշած ու ոչինչ չըկարացին
խօսել: Իսկ ածխագործը փութացաւ թախտի տակը
պտուելու և սուրբ ոսկու պալուսակը տեսաւ իր տե-
ղը: Վրդովված սիրտը հանդարդեց և ասաց ար-
ցունք թափելիս կնոջը, այ կին, մի սգար, սա մեր
արարմունքն է, երեւի այն մարդը առաօտեան գը-
նալիս փնտռել է իր պալուսակը չէ գտել, բար-
կութիւնից սպանել է մեր մանկանը ու փախել:

Կինը անդադար լալիս էր:



Ծ



ետեալ օրը ածխագործն ասաց իր
կնոջը. գիտես, այ կին, մեզ այսու-
հետեւ այս գիւղում մնալն ի զուր
է, մենք պէտք է հեռանանք մի այն-
պիսի երկիր որտեղ մեզ բոլորովին չըճանաչեն: Ել
այսուհետեւ հարկաւոր չէ մեզ Շահնավուր իշխանի
օգնութիւնը: Մենք կարող ենք մի երևելի քաղա-
քում սեպհական տներ զնել և վայելել իշխանավա-
յել ու երջանիկ կեանք:

Ածխագործը չըզիտէր Շահնավուր իշխանի միտ-
քը, չըզիտէր թէ ինչու համար նա այնքան սիրում
էր սորանց: Բայց նորա, իբրեւ բարի և առաքինի իշ-
խանի, այնքան ընծաներն օտարոտի չէր թվում ա-
ծխագործին կամ ուրիշներին:





ԾԱ

Ծխագործն առաւ ոսկի-
քնն ու իր կինը գնաց
մի ուրիշ իշխանութեան մէջ մի երեւելի քաղաքում
Հաստատեց իր բնակութիւնը: Սկսեց շքեղաշուք
պալատանման տներ շինել, ծառաներ պահել, սկսեց
մեծամեծ իշխանների հետ ծանօթանալ ու միշտ նո-
րանց հետ գնալ զալ անել:

Մի տարուց յետոյ նորանք դարձեալ ունեցան
մի աղջիկ:

Մեծ խնջոյքներ արաւ ածխագործը, որ այժմ
ճանաչվում է իշխան Բէգգատ անունով, կանչեց բո-
լոր բարձրաստիճան մարդկանց, ուտեցրեց բոլորին,
խմեցրեց և վերջապէս բոլորն լի ուրախութեամբ,
գոհունակութիւն անելով ածխագործին — իշխան Բէգ-
գատէին, ցրուեցին իրենց տները:

Նորածին աղջկան գոչեցին Պոհար:

Ո՛վ կրճանաչէր այժմ նորան, ով կ'իմանար թէ
նա ածխագործ է եղել, այժմ բոլորն էլ պատվում
են նորան, յարգում են, գլուխ են խոնարհեցնում ա-

մենքը, և նա վայելում էր իշխանական վայելուչ
երջանկութիւն. ապրում էր նա ուրախ:



ԾԲ

Ղխան Շահնավուրը լսելով ածխա-
գործի անցյալանալը, իսկոյն մար-
դիկ ուղարկեց զանազան երկիր-
ների, քաղաքների որոնելու նորան:
Բայց չըկարողացան գտնել ոչ ոք
չը գիտէր նորա տեղը:

Ո՛վ գիտէ, գուցէ ինքը և կինը գնացել են ան-
տառը և զոհ են դառել գիշատի: զազանների, ա-
սում էին շատերը:

Մինչև անգամ Շահնավուր իշխանի մարդիկը
խնդրեցին իշխան Բէգգատէին, որ նա ևս հարցնէ
ամեն տեղերից, որովհետեւ այն քաղաքի մէջ ամե-
նապատուական մարդկանցից մէկը նա էր և նորա
խօսքն անկատար չի քնալ:

Շատ լաւ, սիրելիք ես կ'աշխատեմ, կըհոգամ
դորա համար և եթէ գտնեմ անշուշտ ձեզ կըյայտ-
նեմ, ասաց Բէգգատ իշխանը:

Արքան նման է այդ մարդը ածխադործին և որքան նորա նման էլ խօսում է, ասաց Շահ-նափուր իշխանի ծառաներից մէկը իր ընկերներին:



Թ

Ի որ Շահալմասը խնդրեց հօրը, որ թող տայ իրեն ճանապարհորդելու զանազան երկիրներ:

Գնա, ասաց Շահնափուր իշխանը, դնա որտեղ կուզես. կըրնեմ քեզ հետ իմ ամենասիրելի իշխաններից մէկը և — Կոյլաւը: Նա քեզ կըկարգւնայ, նորա խօսքը նորա առաջարկութիւններն անկատար չըթողնես:

Թ

Հետեւեալ օրը մեծամեծ պատրաստութիւններով Շահալմաս իշխանը դուրս ելաւ Կոյլաւի և ուրիշ երկրասարդ իշխանների հետ շրջելու ուրիշ երկրներ:

Խնդում էր իշխանուհի Հուրին տեսնելով որդուն քաջապէս ձի հեծնելը և բազէի պէս թռչկոտելը:

Նոքա հասան մի քաղաք և իջևանեցին մի նշանաւոր իջևանում:

Երկու օր Շահալմասը շրջելով քաղաքի այս ու այն անկիւնները, երրորդ օրը երեկոցեան պահուն դիմեց դէպի այն երկրի թագաւորի այգին, որ այն օրը բաց էր ամենի համար:

Մտաւ Շահալմասն այն գեղելի այգին:

Նայում էին բոլոր զբօսողներն աւելի տիկնայքը և օրիորդները ու փում հիացած Շահալմասի գեղեցիկութիւնով:



Թ

աղաւորի աղջիկը նորան տեսնելուն պէս սիրտը սկսեց բորբոքուիլ:

Փութացաւ այնտեղ թագաւորի աղջիկը, մօտեցաւ Շահալմասին և ասաց. դու ինչ երկրից ես այստեղ եկած, կամ ում որդին ես և ինչ նպատակ ունիս:

Շահալմասը նայելով օրիորդի վառվռուն պատկերին, միանգամից չափշտակուելով, քաղցր և մեղմ

ձայնով պատասխանեց. ես Շահնավուր իշխանի որդին եմ, շրջում եմ երկիրներ տեսնելու:

Արդեօք դու ամուսնացած չես, հարցրեց օրիորդը Շահալմասից:

Ոչ, նազելի, ես դեռ ամուսին չունիմ, պատասխանեց Շահալմասը ժպտալով:

Եւ չես մտածում ամուսնանալու, հարցրեց դարձեալ օրիորդը:

Շահալմասը շփոթուեց և ոչինչ չըկարողացաւ ասել, նա արդէն հասկացաւ օրիորդի միտքը: Ինքն ևս շատ ուրախ էր ունենալ այնպիսի մի դեղեցկուհի և ահա պատասխանեց օրիորդին. կըցանկայի ամուսնանալ միայն թէ պատահէի քեզ նման մի չքնաղին:

Ուրախացաւ օրիորդը և ասաց. ուրեմն դու սպասիր այս այգու մէջ, մինչև որ բոլորը ցրուեն այտեղից, այնուհետեւ կըտանեմ քեզ հօրս մօտ, կըյայտնեմ նորան մեր խորհուրդը և յուսով եմ, որ նա կըհամաձայնի:



ԾԶ

բօսնոդները կամաց-կամաց ցրուեցին, մութը սկսեց պատել և այգու մէջ տիրեց լուսթիւն:

Գնաց օրիորդը, ընկաւ հօր առաջ, փռեց իր մետաքսանման մազերը նորա ոտքի տակ և ըսկսեց աղերսել նորան:

Թագաւորը մնաց ապշած, ոչինչ չը հասկացաւ չըգիտէր ինչ պատահեց իր աղջկայ հետ և հարցրեց նորանից. իմ աչքի լոյս, ինչ պատահեց քեզ: Հայր իմ, ասաց օրիորդը ընտրել եմ ես իմ փեսան:

Թագաւորը քաղցրութեամբ բարձրացրաւ աղջկան և ասաց. թող քո կամքը լինի, բայց որտեղ է քո ընտրած փեսան:

Գնաց փութով օրիորդը առաւ Շահալմասի:

ձեռքը, բերաւ հօր մօտ և ցոյց տալով նորան ասաց.
հայր, ահա իմ ընտրած փեսան:

Թագաւորը հէնց որ նայեց Նահալմասի գեղեցիկ դէմ պատկերին, Նահալմասի ձախառն, սիրտ տուաւ Նահալմասին և ասաց. դու ուրախ եղիր, չըկարծես թէ, որ հայրդ լսէ կրքարկանաց, այլ ընդհակառակն նա չափազանց կ'ուրախանայ:

Նահալմասը ասաց, որ իր հետ է հօր հաւատարիմ իշխանը և հարկաւոր է նախ նորան յայտնել:

Կանչեց թագաւորը Կոյլաւին և բոլորը յայտնեց նորան:

Կոյլաւն ասաց, որ Նահալմուր իշխանը այդ լսելով պէտք է չափազանց ուրախանայ:



ԾԲ

Թնդաց, դղրդաց Նահալմուր իշխանի երկիրը, բոլոր ժողովուրդը մեծ թէ փոքր պատրաստուեցին ընդունելու իրենց նորապսակ իշխանին և իշխանուհուն:

Կոյլաւը, Նահալմասը և հարսը երեք օր մնալով թագաւորի քաղաքում և այդ երեք օրը մեծ ուրախութիւններ անելուց յետոյ, չորրորդ օրը պատրաստուեցին դիմելու իշխան Նահալմուրի երկիրը—իրենց հայրենիքը:

Նքեղաշուք հանդիսով Նահալմասը և իր ամուսինը ընդունվեցան Նահալմուրի ապարանքում:

Եօթն օր, եօթը զիշեր մեծ խնջոյքներ արաւ իշխան Նահալմուրը: Նորա իշխանները և բոլոր հըպատակները կերան, խմեցին և օրհնելով իրենց իշխանին և իշխանուհուն ու նորանց յաջորդներին ցրուեցին իրենց տեղերը:



ԵԹ

Անցաւ այդ օրից չորս ամիս:

Նորապսակ իշխանուհու գոյնը կամաց-կամաց սպառուեց, նորա վառվռուն, աստղափայլ աչերի լոյսը նուազեց և չարագուշակ հիւանդութիւնը գրեց խեղճին մահճի մէջ: Ցանջուեց խեղճը երեք ամիս, քնքոյշ ծաղկի նման սկսեց թառամել և վերջապէս մի օր փակեց քնքուշիկ աչերը. նորածաղիկ կեանքը կնքեց յաւիտեան:

Սուգ և տրտմութիւն պատեց իշխան Նահապուրի ապարանքը և յորդառատ արտասունքներով ջրուեց նորա դահլիճները:

Շինեցին ոսկի դադաղ և վաղաթառամ իշխանուհու դիակը տեղաւորեցին նորա մէջ:

Երբ դադաղը դրին խոր փոսի մօտ, վերջին անգամ գրկեց Նահապմասը իր ամուսնու դիակը, համբուրեց նորա ճակատը, թաթախեց իր դառն արտասուքով:



Կ



նցաւ այդ օրից մէկ տարի:

Մի օր Նահապմասը իր ծառաների հետ շրջում էր անտառում և զուարճանում սքանչելի բնութեան հրաշքներով, որոնում էր այծեամբներ, աղաւնիներ և ուրիշ կենդանիներ ու թռչուններ:

Հեռու, անտառի խորքերից լսելի եղաւ նորա ականջին մի տխուր մեղիդի:

Ախ ինչ կրկինէ՛ր, որ ես էլ այդպէս
Սահէի յառաջ առուակ պաղպաղուն,
Թողնէի այստեղ իմ բոլոր վշտեր,
Ուրախ երթայի դէպի ծով անհուն:

Այնտեղ ես ազատ քնքոյշ ձկանց հետ
Սառը ջրի մէջ հանդարդ լողացի,
Խոցոտուած սրտիս բիւր անբոյժ վերքեր
Մովի կատաղած ալեաց թողնէի:

Կամ ինչ կրկինէր թողնէի հանգիստ
Պառկէի կանաչ այս ծառերի տակ

Եւ այստեղ յաւէտ փակէի աչերս
Ել չըդառնայի սև օրուան կատախ:

Եւ շիրմիս վերայ բուսնեն բիւր ծաղկունք,
Մի բարակ ոստով աճէ վարդենի,
Եւ չքնաղ թռչունք անոյշ դայլայլով,
Կարդալին վերաս քաղցր մեղեդի:

ԿԱ

Քշենք ձիաները դէպի այն կողմը, տեսնենք
այդ անոյշ ձայնը ումն է, ասաց Շահալմասը իր
ընկերներին, և ձիու զլուխը դարձրեց դէպի այն
կողմը:

Շահալմասը և ընկերները գնում էին մթին և
ստուերախիտ անտառների միջով, զնացին և վերջա-
պէս շփոթվեցան էլ չ'իմացան որ կողմը գնան,
որպէս զի գոնեն այն տխուր երգողը:

Նրանք մնացին կանգնած լսեցին դարձեալ մի-
ևնոյն ձայնը, որ երգում էր այսպէս.

Ամեն մի ուխտեալ հասաւ բաղձանքին,
Զովուժիւն փչեց խոցոտուած սրտին,
Միայն իմ բաղտիս անիւն է ծռուել,
Սէրն պատանու սրտումն թողել:

Սէր, դու կրակ ե՞ս, որ ինձ այրում ես,
Եւ որպէս որ թունք սիրտս կրծում ես,
Խնդրեմ քեզանից ինձմէն հեռացիր
Քեզ ձեռք բերողին զնա մօտեցիր:



ԿԲ

ա ինչ տեսաւ. մի չքնաղա-
գեղ օրիորդ, զլուխը թեքած
մի պառաւ կնոջ ծնկան վե-
րայ, սևափայլ մազերը փռուած:

Յափշտակուեցաւ Շահալմասը, աչքը չէր թող-
նում օրիորդի երեսից, նորա սառած երակների մէջ
արիւնը կրկին տաքացաւ, էլ ոչինչ չըխօսեց, միայն
հարցրեց պառաւից. դա ո՞ր աղջիկն է:

Նախուտ վաճառականի աղջիկն է, պատասխա-
նեց համեստութեամբ պառաւը:

ԿԳ.

Հետեւեալ օրը մարդ ուղարկեցին Նախուտ վաճառականին յայտնելու իշխանի որդու ցանկութիւնը՝ պսակուել նորա աղջկայ հետ:

Ձափ չրկար Նախուտի ուրախութեան, լսելով այդպիսի մի առաջարկութիւն:

Յրեք օրից յետոյ մեծ հանդիսով կատարուեց Շահալմաս իշխանի և Նախուտ վաճառականի աղջկայ հարսանիքը:



ԿԴ.

Լրախ խնդալով ամեն ժամ Շահալմասը չէր հեռանում իր սիրահարի մօտից: Մոռացաւ նա

միանգամայն թագաւորի աղջկան—իր հանգուցեալ ամուսնոյն, թողեց տխրութիւնը և ամեն ժամանակ ուրախութեամբ և հրճուանօք վարում էր կեանքը:

ԿԵ.



արձեալ ողբ, դարձեալ սուգ ու լաց տիրեց Շահալմուր իշխանի ապարանքը:

Կլանեց հողը Շահալմասի և երկրորդ ամուսնոյն:






ԿԶ

Լրախուժիւն, ժպիտ, ծի-
ծաղ հեռացաւ Շահալ-
մասի երեսից. նորա երեսը ծածկուեցաւ մթին
քօղով, սրտամաշուկ մոքեր սկսեցին կրծոտել նորա
սիրտը և տանջել ու հալ ու մաշ անել:

ԿԷ



Մեցան ամիսներ, Շահալմասը այլ ևս
չէր մտածում ամուսնանալու:
Շատ տեղերից մեծամեծ իշխաններ օրիորդներ
էին առաջարկում նորան, բայց նա չէր համաձայ-
նում:

ԿԸ

Անցաւ այն օրից ուղիղ երկու տարի երբ վախ-
ճանուել էր Շահալմասի երկրորդ ամուսինը: Շահալ-
մասը թափառում էր անդադար երկրէ երկիր:

Մի քաղաքում նորա բնակարանը կից էր մի
հոյակապ պալատի, ուր ապրում էր մի հարուստ
իշխան իր կնոջ և միակ աղջկայ հետ:

Դա Բէզգատ իշխանի ապարանքն էր: Այնտեղ
ապրում էր իր Գոհար աղջիկը մեծացած, չքնա-
ղացած, այնպէս որ մարդ տեսնելուն պէս մնում էր
միանգամայն հիացած:

Այտեղ Շահալմասը յափշտակուեց Գոհարի հրա-
շալի պատկերով:

Կանչեց իր ծառաներին, իր մտերիմ ճանապարհորդակիցներին յայտնեց նորանց իր սրտի ցանկութիւնը, խնդրեց որ միջնորդեն իր հօրը ու Բէզգատ իշխանին:

Նորա մտերմագոյն ընկերներին մէկը յանձն առաւ, որ այդ բոլորը կ'իրագործէ:



ԿԹ

Ղխան Բէզգատը շատ լաւ էր ճանաչում Շահնաւուր իշխանին և նորա որդուն, բայց վերջիններս չէին ճանաչում նորան, թէպէտ և ասում էին թէ՛ այս իշխանի պատկերը որքան նման է մեր հարեան ածխագործին:

Հետեւեալ օրը յայտնեցին Բէզգատ իշխանին Շահալմասի մտադրութիւնը:

Չափ չըկար նորա ուրախութեանը. համաձայնութիւն յայտնեց:

Ապա յայտնեցին Շահնաւուր իշխանին:

Շահնաւուր իշխանը պատասխան ուղարկեց որդուն, սիրելի իմ Շահալմաս ես համաձայն եմ, ես պատրաստ եմ ընդունելու քեզ և քո հարսին ինչպէս հարկն է:



Հ

Եժ խնջոյքներ արեց Բէգ-
ղատ իշխանը. հրաւիրեց
բոլոր հարեւան իշխաննե-

րին և իշխանուհիներին:

Կերան, խմեցին բոլորը և շնորհակալութիւն
անելով ցրուեցին իրենց տեղերը:

Շահալմասը և իր ամուսինը պատրաստուեցին
մեկնելու դէպի Շահնավուր իշխանի երկիրը:

Բէգղատ իշխանը իր սիրելի աղջկան խոստացաւ,
որ քիչ ժամանակից մեծամեծ ընծաներ կուղարկէ
նորա համար:

Շքեղ հանդիսով ընդունվեցաւ Շահալմասը իր
ամուսնու հետ Շահնավուր իշխանի երկրում:



ՀԱ


անկարծ Շահնավուրի աչքին
ընկաւ մի գեղեցիկ մանեակ,
փութալով առաւ իր ձեռք
և սկսեց անթարթ աչքերով
նայել:

Սիրելի Հուրի, սա կարծես
թէ մեր մանեակը լինի, որ
նուիրել էի մեր հարեւան իշ-

խանին:

Այո, սիրելի Շահնավուր:





ՆԲ

անշեց Նահնավուրը Բէգզատի աղջկան—իր հարսին և հարցրեց նորանից. զիտե՞ս արդեօք, սիրելի Գոհար, որտեղից է ձեզ այս մանեակը:


Գոհարը սկսեց պատմել. ես լսել եմ մօրիցս, որ հայրս սկզբանէ պարապել է ածխագործութեամբ և ես ունեցել եմ ինձանից առաջ ծնուած մի փոքր քոյր: Մեզ հիւր է լինում մի հարուստ ոսկերիչ, նա գիշերը սպանում է օրօրոցում քնած քրոջս, թողնում է մի պապուսակ լի ոսկով և թանկագին ակնեղէններով, որտեղ լինում է այս մանեակը, ու ինքը փախչում:

Նահնավուր իշխանը և Հուրի իշխանուհին մընում են զարմացած, իսկոյն կանչում են հարեան իշխանին, որին նուիրած են եղել մանեակը և հարցնում են բանի էութիւնը:

ՆԳ



Ղխանը իր եղեռնագործութեան պատճառը մանրամասնաբար պատմում է և ապա ընկնում իշխան Նահնավուրի ոտքերը ներողութիւն խնդրում:



20 м

Ер	№	303/2
МАГ	Ц	20 - н
43		
К. П. С. И. О. Н.		



hmk

6

2013

23249

« Ազգային գրադարան



NL0058051

